

## ՓՂԵՆԻԿ ԵՒ ՓԵՆԱԽՆԱՅ.

ԵՐԿՈՒ ԾԱՂԿՈՒԻՆՔ Ի ՇԻՐԱԿ

Դրունը ֆոր՝ անուանի բուսաքնին դազվացի ուղերին, որ ճանապարհորդեց յլլրենելու, և 'ի 15 յուլիսի 170 ժին տնցնելով Շիրակաւանէն (իրազգաւարս, Պաշ-Շօրէկէլ) և Փերկիտէն, ու իւշտ անուամբ գեղի մը դէպ 'ի հիւսիսային կողմը յառաջիւր ժամանակ, կը դանէ զծաղիկն Փունիկ (Էլիփաս Օրիենտալիս), զոր և գլոբալ զյուն, և զեղցկագոյն 'ի բայս Արիելից համարեցաւ (նա), և յերկար ստորագրէ, հանդերձ պատկերաւ։ Դրունը ֆորի ստորագրութիւնն այս է։

« Այս օրը Արենեքի ամենէն աւելի, ըստ իմ՝ կարծեացս, չնաշխարհիկ բայսը դտանք, մեծածաղկի Փղենիկի տեսակ մը, որու խաւարծիլն դէպ 'ի վար իսուարհած է; իրեն արմատն՝ որ զրիելէ երկու կամ երկերթացափ երկայն է, գծաշափ մը և կէս միայն թանձրութիւն ունի, պինդ է, կարմիրանգ, վարսաւոր. և բանն ինն կամ տասն թթացափ բարձրութիւն ունի, քառակուսի, վարի կողմը ծիրանեղոյն, թեթև կերպով ազուամազով պատած, հանդերձ երկու երկու մէկմէկու խաչածե ընդդիմակագագիթ աերեագր, մէկ թթացափէ մինչեւ 15 գծաշափ երկայնաթիւն ունին, որոնքնման էին ոջացեղ բայսին. զեղին, եղերները թաւամոզ, հերձեզրտ (crenelé) և երակաւոր. իրենց անութիւներուն միջն զուրս կ'ենէ ծաղիկ մը իւրաքանչիւր կողման վրայ, ետեւէն խողափակած և նեղնարով, կանաչստպոյն, միայն մէկ

և կէս կամ երկու գծաշափ երկայն ։ Այս խողափակ յետոյ երկու շրթունք կը կազմէ. ասոնցմէ վերինն նախ երկու տեսակ բորբածէն ականջք կը ձեւացընէ, որոց միջն խոտարծիլ մը կամ ծուռ խողափակ մը կը բարձրանայ, ինն գծաշափ երկայն և մէկ գծաշափ լսյն, որ ծուածն շրթամբ մը կը վերջանայ՝ որու արտամազիթն մէկուկէս գծաշափ է, կնճռեալ, շրջապատեալ պղտի մազերէ, որոցմէ վեր կը բարձրանայ սերմանափակին մազմզուկն ։ Իսկ վարի շրթունքն մէկ բթաշափ երկայնութիւն և լոյնութիւն ունի և երկք մաս կը բաժնուի, որոց երկու կողմիններն՝ երկու մեծ ականջաց կը նմանին ։ Ստորին մասն երեք կտոր կը բաժնուի ։ Իոզմնակի եղածներն բոլորածե են, իսկ միջինը՝ սրածայր կտորցի մը կը նմանի ։ Այս ամբողջ ծաղիկս զեղին քրբամատեսակ է, բաց 'ի վերին շրթանց ստորին մասէն՝ որ ճերմակագոյն է ։ Որդաններն շատ կարճ են և վերնագոյն շրթանց թերուն առկ ծածկուած։ իրենց տափակ և բաց զեղին գագաթունքն երկու գծաշափ երկայնութիւն և մէկ լոյնութիւն ունին ։ Վերին շրթունքն կը նմանի փոփ մը պատիճի, երբ կը ծոփ ան մը տանեեւս իր բերանը. մինչդեռ ուրիշ այս տեսակ ծաղիտնց մէջ՝ որոնք հիմայ կը ճանցուին, բարձրոցած է այս շրթունքս։ Բաժմակն միակուրէ, երեք գծաշափ երկայն, թեթև կերպով մազուս. անոր վերին շրթունքն ստոր և աղեղնածն կարած։ Ստորին շրթունքն

1 չ. Ղ. Ալեքսան. - Ելբատ. Տեղագ. Պարէտ. որ և կաւեցընէ. « Ալան պատճամձեւ ծըլք ծաղկին Փիլ կոչեցին բուօսարանէ, ըստ այնմ և մեք Փշէմի. և է տեսակ Փիլածազէ ազգի. Ռինաննոս, յատկաբար կոչեցեալ ինխանիսոս Ըէթերէւ»

(Քթածապէկ արեւելէան), 'ի Փառնկաց՝ Գոգէր օրիանու գեղեցիկագոյն և մեծագոյն է յացը իւրօմ, և ցարդ չէ ուրեք այսպիսի երկեալ որպէս ուր եղիան Փուռնը ֆոր. ըստ նմանէ ստորբուն զայն յերկարուէն բուռաբանէ ։

խոր կերպով ճեղքուած է յերկուու մասունս : իւրաքանչյուր ծաղիկն նրբագոյն կէս թթաշափ կոթունի մը կպած է : Ենթամափակն՝ որ քիչ մը ծուածն պառկ մ”է, մէկ գծաշափ միայն երկայն է և կէս թթաշափ երկայն պառուզ մը կ’ըլլոյ, զրեթէ քառակուսի՝ բոլորածն անկեամբ, բաց կանանց, թաղանդային, երկուքուկէս գծաշափ ստուար, և իրեն երկայնութեամբն երկու պղտիկ խորչեր ունի, որոնք կողմնակի կը բացուին և կը պարունակեն մէկուկէս կամ երկու գծաշափ երկայն և մէկ գծաշափ ստուար հատիկներ, որոնք իրենց երկայնութեամբն ճեղքեր ունին և պղտիկ երիկամանց մը կը նմանին :

Աւրիշ բուսաբան մը այսպէս կը խօսի . «Այս բոյան իրեն ծաղկանց նորատեսակ ձեսվն նշանաւոր է . . . Այս գեղեցիկ բոյան յԱրևելս կ’անի » : Աւրիշ մը . « ի Դուռնլֆորէ յԱրևելից բերեալ Թինանիրոց իշեքասն գեռ միայն անուամբ ծանօթ է : Գեղեցկագեղ բոյս մ”է այս, լոյնամերթ ծաղկօք, քըրքմատեսակ, որու ստորին շրթունքն կերպով մը փղի պատիճին կը նմանի, ուստի առեր է իւր ուսումնական անունը :

Խոկ միւս ծաղկան վրայ, որ է ֆենունա (Պէղունիքա Օրիէնդալյա), համառօթի այսպէս կը խօսի Դուռնլֆոր .

« Կէսօրուան միջոց իջանք գեղեցիկ հովտի մը մէջ, որ կէս միջն հեռու էր ’ի Փերկիաէ : Հօն գտնուած շքնաղադիւտ բուսոց մէջ տեսակ մը ֆենունա տեսանք՝ որ շատ գեղեցիկ էր, որու սերմըն աճեցաւ և բազմացաւ թագաւորական պարտէզին մէջ : Այս բոյսս զարմանալի է աւելի իրեն երկայն տերեններովն, որոնք կէս ունաշափ երկայնութիւն և մէկ թթաշափ լոյնութիւն ունին, զորս ամենակին չէ այլայլած մշակութիւնն : Երկայն ժամանակէ ’ի վեր այս բոյս ճանչուած է ’ի Գալլիա, որովհետեւ Պ. Առաջին թժիշկն՝ զտաւ ասոր նկարն այն պատիկերացոյց տախտակաց վրայ, զորս Պ. Տը լա Պրօմ’ իր հաւուն եղբայրն և թագաւորական պարտիզին

տեսուչն նկարել տուեր էր : Եղնէկ, որ այս պատիկերացոյց տախտակներս ժամանակին ’ի լոյս ընծայուեցան . ասոնք կատէի պարտէզին ունեցածներէն ա-



Փկննիկ ծաղիկ (*Elephas Orientalis*).

ւելի մեծ և գեղեցիկ նկարուած են : Պ. Առաջին թժիշկն՝ որ քիչ մը վերջը ձեռոք բերեալ զանոնք, յոյս առւաւ մեղի ըլլնոյնս հասարակաց ’ի լոյս ընծայելու » :

Այս բոյսա կը գտնէ Դուռնը Փոր Մեծ  
Փերկիս դիւզին մօտ աեղուանը Հով-  
տի մը մէջ, ինչպէս կ'ըսէ ինքն, ուրիշ  
այլ և այլ սակաւագիւտ բուսոց հետ:



Փերկնա արևելինա (Betonica Orientalis).

Թերկն ճանօնձագոյն ըլլալով ծաղիկս,  
նա զանց կ'ընէ անկարանօրէն անոր  
մանրամասանց վրայ խօսելու:

Լինէսս հռչակաւոր բնագիտին գա-  
ղաք դ.

սաբանութեան մէջ երկազօր մերկա-  
սերմի չորկտապահներորդ գասուն կը  
վերսրբերի: Բոյսն խոտեղէն է, ցօղուն  
ուղիղ, պարզ, քառակուսի և աղուա-  
մազով պատեալ: Բաժակն փողաձև  
հինգ սրածայր տերևելիներով. ծաղկա-  
թերթն փողաձև, երկաշրթնաւոր, ծը-  
ռած զլանաձև խողովակով և բաժա-  
կէն աւելի երկայն է. չորս երկազօր  
որձաներ ունի, մէկ իգայ կոմմասերմինա-  
փակ կրկնահերձ կնքով. Տերեներն եր-  
կայնաձև են, ընդգիմսագագաթ, վե-  
րինքն անկոմթուն են, ստորինքն երկայն  
կանթով լընդգիմսագագաթ և հիրձե-  
զրոտ: Մազիկքն հասկի ձևով շարուած  
են մէկ կանթի վրայ, ծիրաննեղոյն և  
երբեմն ճերմակ գունով:

Մարգագեսնոց, անտառաց մէջ և  
հովանաւոր աեղուանը շատ կը զըտ-  
նուի այս բօյս: Հինք՝ որոնց լաւ ծա-  
նօթ էր այն, բժշկական շատ յատկու-  
թիւններ կ'ընծայէին անոր. իսկ այժմ  
գրեթէ բոլորովին մոռցուած է: Ասոր  
արմատն իրեւ ործացուցիչ կը գործ-  
ածէին. իսկ տերեներն և ծաղկիները  
թիւնոց գնելով և շարապ մը շինելով,  
իրեւ օգտակարագոյն գեղ ըլղեղի, թո-  
քոց, միջաց և ստամնիքսի հիւանդու-  
թեանց կը մատուցանէին հիւանդաց:  
Դարձեալ աերեները իրեւ սպեզանի  
մը կը գործածէին զլսու վիրաց հա-  
մար. նաև աերենոց հիւթով կը թիւէին  
զրամբակը, և ականջի ցաւը կը գարմա-  
նէին: Նաև աեղ տեղ չորցընելով տե-  
րեները, իրեւ ընչագեղ կը գործ ածեն,  
և այլուր իրեւ ծխախոտ կը քաշէն՝ ար-  
բեցութիւն պատճառելով նման զինուայ:

Գափիագելի էր գիտնալ թէ արգեօք  
այս գլցնիկ և ֆենունա գեղեցիկ ծաղ-  
կունկս, այնչափ գովիեալք ՚ի Դուռնը-  
Փորէ, հիմայ ալ կը գտնուին ֆերկիաի  
մօտ կամ Հայաստանի որիշ կողմերը.  
գժուարին է որ բոլորովին բնախնչե-  
ղած ըլլան, և հետազոտ աջք մը՝ մեր  
նկարագրութիւնը և պատկերը առաջ-  
նորդ առնելով պէտք է գտնէ զայն: